ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1 հեռ. 011-514-162

№67-2024թ. 29 մարտի 2024թ.

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի
քարտուղարի ժ/պ Շավարշ Գրիգորյանին

Երևանի ավագանու «Մայր Հայաստան»
Խմբակցության անդամ Արշակ
Սարգսյանից

Երևանի ավագանու քննարկմանը ներկայացնելու նպատակով, կից ուղարկում եմ «Երևան քաղաքում փողոց անվանակոչելու մասին» որոշման նախագիծը:

Առդիր՝ 3 էջ:

Երևանի ավագանու «Մայր Հայաստան»
խմբակցության անդամ՝ Արշակ Սարգսյան

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2024թ. N ----Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 2387-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի 4-րդ և 13-րդ կետերով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Երևան քաղաքի Սիլիկյան նոր խճուղուց մինչև Տիչինայի փողոցն ընկած չանվանակոչված փողոցն անվանակոչել հայ լեզվաբան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ Հովհաննես Բարսեղյանի անվամբ՝ «Հովհաննես Բարսեղյանի փողոց»:

Երևան քաղաքի ավագանու
«Մայր Հայաստան» խմբակցության անդամ՝ Արշակ Սարգսյան

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայ լեզվաբան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ **Հովհաննես Բարսեղյանը** ծնվել է 1920թ. հոկտեմբերի 25-ին ՀՀ Թալինի շրջանի Մաստարա գյուղում: Սովորել և ավարտել է տեղի յոթնամյա տեղի և Թալինի միջնակարգ դպրոցները: Մասնակցել Հայրենական մեծ պատերազմին, սակայն երրորդ անգամ ծանր վիրավորվելուց հետո 1943թ. զորացրվել է և շարունակել ուսումնառությունը: 1944թ. ավարտել համալսարանը և անմիջապես ուսումնառությունը շարունակել ԵՊՀ ասպիրանտուրայում: 1955թ. վերջինիս շնորհվել է դոցենտի, իսկ 1984-ին՝ պրոֆեսորի կոչում: Հովհաննես Բարսեղյանը 1946-1948թթ. եղել է ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի, այնուհետև՝ մինչև 1958թ., Երևանի հեռակա պետական մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի ամբիոնի դասախոս: 1958թ. նա կրկին տեղափոխվել է ԵՊՀ և 1969-ին ընտրվել հայոց լեզվի ամբիոնի վարիչ: 1977-1985թթ. եղել է բանասիրության ֆակուլտետի դեկան, 1985-1990թթ.՝ հայոց լեզվի պատմության ամբիոնի հիմնադիր-վարիչ: Հովհաննես Բարսեղյանը հեղինակ է մի քանի տասնյակ գիտական հոդվածների, ավելի քան 20 մենագրության , այդ թվում՝ «Արդի հայերենի բայի և խոնարհման տե

սություն», «Մանուկ Աբեղյանի հինգ հոլովի տեսությունը և նրա հին ու նոր քննադատությունները», «Հայերենի խոսքի մասերի տարբերակման տեսությունները», «Հայերենի խոսքի մասերի ուսմունքը», ինպես նաև 1964 թվականից սկսած պարբերաբար հրատարակված «Տերմինաբանական ուղեցույցը»: Հովհաննես Բարսեղյանը հայտնի է նաև որպես բառարանագիր է, ամենահայտնի բառարաններից է նրա և պրոֆեսորներ Թ.Խ. Հակոբյանի և Ստ.Տ.Մելիք-Բախշյանի հետ համահեղինակությամբ հինգհատորյա «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանը»: 2003թ. այդ եզակի բառարանն արժանացել է ՀՀ Նախագահի մրցանակի: Հովհաննես Բարսեղյանի համահեղինակությամբ է կազմվել նաև հանրակրթական դպրոցի 4-րդ և 5-7-րդ դասարանների «Հայոց լեզու» դասագրքերը: Հովհ.Բարսեղյանը 1969-1972թթ. եղել է ԵՊՀ կուսկոմիտեի առաջին քարտուղար: 1955-ից նա կատարել է ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին

առընթեր տերմինաբանական կոմիտեի, իսկ 1992-ից ՀՀ կառավարությանն առընթեր լեզվի պետական տեսչության հայերենի բարձրագույն խորհրդի գիտքարտուղարի պարտականությունները: 1970թ. Հովհ.Բարսեղյանն արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման: Պարգևատրվել է «Պատվո նշան» (1981), Հայրենական մեծ պատերազմի II աստիճանի (1985) շքանշաններով, «Մովսես Խորենացի» և բազմաթիվ այլ մեդալներով:

Ուստի, հաշվի առնելով Հովհաննես Բարսեղյանի նշանակալի դերը հայ բանասիրության և գիտության զարգացման գործում, առաջարկում եմ Երևան քաղաքի Սիլիկյան նոր խճուղուց մինչև Տիչինայի փողոցն ընկած չանվանակոչված փողոցն անվանակոչել Հովհաննես Բարսեղյանի անունով:

Երևան քաղաքի ավագանու
«Մայր Հայաստան» խմբակցության անդամ՝ Արշակ Սարգսյան